Կրթության կարևորությունը

Եկեղեցու ղեկավարների հետևյալ ուղերձները և սուրբ գրությունները կարող են օգնել ձեզ ավելին հասկանալ ձեր կրթության վերաբերյալ Տիրոջ ակնկալիքների և ցանկությունների մասին: Ուսումնասիրելիս փնտրեք ճշմարտություններ կրթության կարևորության մասին:

Սուրբ գրություններ ուսումնասիրության համար.

Վարդապետություն և Ուխտեր 88.77–80, 118; 130.18–19

Եկեղեցու ղեկավարների ուսմունքները.

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.



Կրթություն ստանալը ձեր ձեռքերում է: Ոչ ոք չի կարող անել դա ձեր փոխարեն: Որտեղ էլ լինեք, զարգացրեք սովորելու խոր ցանկությունը: Մեզ համար՝ որպես Վերջին Օրերի Սրբերի, կրթություն ստանալը պարզապես արտոնություն չէ, դա կրոնական պատասխանատվություն է: «Աստծո փառքը բանականությունն է» (տես Վարդապետություն և Ուխտեր 93.36): Հիրավի, մեր կրթությունը հավերժության համար է: . . .

Նման երկարաժամկետ հեռանկարը կօգնի ձեզ ճիշտ ընտրություններ կատարել սովորելու հարցում:

> Մի վախեցեք հասնել ձեր նպատակներին, նույնիսկ ձեր երազանքներին: Բայց իմացեք, որ դեպի գերազանց գիտելիքներ և իրազեկություն տանող կարճ ճանապարհ չկա: Կրթությունը՝ մարդկանց օգնելու *ցանկության* և նրանց օգնելու *կարողության* միջև տարբերությունն է: (Ռասսել Մ. Նելսոն, «Դուք ի՞նչ կընտրեք» *Ensign*, հունվար 2015, 32)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է.

Ես և դուք այստեղ՝ երկրի վրա ենք, որպեսզի պատրաստվենք հավերժության համար՝ սովորելու, թե ինչպես սովորել, սովորելու բաներ, որոնք կարևոր են աշխարհիկ կյանքում և հավերժության համար, նաև օգնելու ուրիշներին՝ սովորել իմաստություն և ճշմարտություն (տես Վարդապետություն և Ուխտեր 97.1): Հասկացողությունը, թե ով ենք մենք, որտեղից ենք եկել և ինչու ենք մենք երկրի վրա, մեզանից յուրաքանչյուրի վրա մեծ պատասխանատվություն է դնում՝ սովորելու, թե ինչպես սովորել և ինչպես սիրել սովորելը: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Սովորեք սիրել ուսումը», *Ensign*, փետրվար 2010, 27)

Սփոփող միության գերագույն նախագահ Քամիլ Ն. Ջոնսոնը կիսվել է.

Մենք պետք է հնարավորինս ստանանք ամբողջական կրթություն ու ուսուցում, որպեսզի պատրաստված լինենք: Պատրաստված լինենք՝ ծառայելու աշխարհիկ կյանքում և Եկեղեցում: Պատրաստված լինենք՝ լինելու իմաստուն խորհրդատուներ և կողակիցներ մեր ամուսինների համար: Պատրաստված լինենք՝ լինելու արդյունավետ ուսուցիչներ մեր երեխաների և այն երիտասարդների համար, որոնց վրա մենք ազդեցություն ունենք: Որքան շատ ենք սովորում, այնքան ավելի մեծ ազդեցություն կարող ենք ունենալ ի բարին»: (Քամիլ Ն. Ջոնսոն «Seek Learning by Study and by Faith» [BYU–Pathway Worldwide devotional, հոկտեմբեր 19, 2021], byupathway.org):

Երիտասարդներին զորացնելու համար. ընտրություն կատարելու ուղեցույցից.

> Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր դուստրերն ու որդիները միշտ սովորեն: Դուք ունեք և նյութական, և հոգևոր պատճառներ՝ ուսման ձգտելու և այն սիրելու համար: Կրթություն ստանում ենք ոչ միայն գումար վաստակելու համար: Այն ձեր հավերժական նպատակի մի մասն է՝ ավելի շատ նմանվել Երկնային Հորը: . . .
>
> Փնտրեք հնարավորություններ՝ ընդլայնելու ձեր միտքն ու ձեր հմտությունները: Այդ հնարավորությունները կարող են ներառել միջնակարգ կրթություն դպրոցում կամ մասնագիտական ուսուցում, ինչպես նաև ոչ պաշտոնական ուսուցում այն աղբյուրներից, որոնց վստահում եք: Ներգրավեք Տիրոջը ձեր ջանքերում և Նա կառաջնորդի ձեզ: Երբ սովորեք ձեզ շրջապատող աշխարհի մասին, սովորեք նաև Փրկչի մասին, որը ստեղծել է աշխարհը: Ուսումնասիրեք Նրա կյանքն ու ուսմունքները: Սեմինարիան, ինստիտուտը և ավետարանի անհատական ուսումնասիրությունը դարձրեք ձեր ողջ կյանքի ուսումնառության մասը: (*Երիտասարդներին զորացնելու համար. Ընտրություններ կատարելու ուղեցույց* [2022], 31)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_581-1